

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Յ. ՔՈՐՈՍԵԱՆ
 ՆԱԽԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
 ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԵՆ, ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱՆՈՅ լրագրի
 ԳԱՅԻՐԷ (Հասպոզանի)

ԱՐՇԱՆՈՅ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԳԻՊՏՈՍ: ՀԱՄԱՐ
 Տարեկան, ողջ դահլիճ. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ
 Տարեկան Ձրանք 20
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIM LE CAIRE (Égypte)

ԼՐԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԽԿ Ե
 ԵՒ ՔՈՐՈՍԵԱՆԻ ԾԱՌՔԸ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են տրուիր:

ՄԵՐ ՎԵՑԱՄՍԷԻՆ ԱՌԹԻԻ

« Արշալոյս » իր քայլերուն առջև կուտակուած անթուելի խոչնդոտներուն վրայէն անցնելով, ահա առաջին տարւոյ կէս շրջանը աւարտեց՝ իր նախորդ համարովը:

Զարգացած ժողովուրդներու, մանաւանդ անգլիական թերթերու կեանքը դարերով հաշուի կ'առնուին « Խայմը » ամբողջ դար մը իր ետեւէն ձգած է. և անոր վարչութիւնը սրտի ա'յնչափ գոհունակութիւն կ'զգայ իր դարագլուխը արձանագրելու ատեն, որչափ կրնան զգալ հայ թերթերու վարիչներն, երբ իրենց տարին լրացնելով՝ յաջորդ շրջանի մը սկզբնաւորութիւնը կ'ընեն:

Առանց այս անհամեմատ տարբերութեանց մանրամասնութիւններուն մէջ խորասուզելու և գանձի վերլուծել ջանալու, բաւական կը համարինք ըսել թէ՛ թերթերու գոյութիւնը պահպանելու հոգածութիւնը, և զայնս պէտք եղածին պէս քաջալերելով զարգացնելու համար զրհորութիւններ ընելու ազնիւ մտածումը՝ մեր մէջ մուտ գտած չէ դեռ, և շատ ալ դժուար պիտի կարենանք համոզուիլ այս ճշմարտութեան: Իբաւ է թէ տեւականութիւն ունեցած և կարևորութիւն ստացած հայ թերթեր ունեցած ենք, բայց ասոնք բազմաթիւ մասերու հայ ժողովրդեան քանակին, շատ սակաւաթիւ ըլլալէ զատ, ո'չ թէ իրենց գտած ընդունելութեանց պատճառաւ իրենց կեանքը երկարած են, այլ անոնցմէ շատերը հաստատամիտ և գործունեայ վարիչներու անդուլ ջանքերուն շնորհիւ միայն իրենց գոյութիւնը պահպանած են:

Իսկով Եգիպտոսին որ հայ հարուստներու կեդրոն եղած է, ասկէ առաջ գրեթէ ոչ ոք մտածած է հայ թերթի մը ընծայելիք օգուտներուն վրայ. և եղած ձեռնարկներն իրենց սաղմին մէջ ոչնչացած են բայ ի « Փարոս » էն, որ գաղթականութեան հոսանքին ատեններն ծնունդ առաւ և ամբողջ տարի մը տեւեց: Անկէ վերջ՝ մեծատուններէն զատ՝ ուրիշներ, այլ ևս սկսան լուրջ կերպով մտածել թերթի մը կարևորութեան և անհրաժեշտ պէտքին վրայ:

Այսպէս ըլլալով հանդերձ, թերթը չըջապատողներուն մէջ դասակարգելու այլազանութիւն մը կայ, որոնք բաւական ստուար թիւ մը կը կազմեն:

Դասակարգ մը կայ, որ անկեղծօրէն ըմբռնած է թերթի կարևորութիւնը:

Դաս մը կայ, որ ի ներքուստ ծայրայեղ կերպով հակառակ է լրագրութեան, սակայն երբ Եգիպտոսը զրկուած կը լինի անկէ, անոր չ'գոյութեան մասին իր զգացած ներքին գոհունակութիւնը ծածկելով, զինք չըջապատողները կեղծաւորաբար կը մեղադրէ, որ իրեն ջանքերուն չեն միանար, որպէս զի հայ թերթի մը գոյութիւնը պահպանուի:

Դաս մը կայ, որ պէճ է կը գոչէ, առանց դանկ մը իսկ զոհել ուզելու:

Ուրիշ դասակարգ մը կայ, որ լրագրութեան բարեկամ ձեւերով միայն, իրաւունք ունենալ կը կարծէ իր համոզումներն անոր մէջ պաշտպանուած տեսնելու, ու երբ իր մտադրածին պէս չ'եղաւ, այլ ևս իրեն կարծիքով պէտքը չկայ լրագրութեան. և պիտի տեսնուի որ նստած ելած տեղերը, իր շուրջը զգուշաւոր ակնարկ մը պտտցնելէ վերջ, իր այդ վերջին համոզումը պիտի պաշտպանէ:

Դաս մըն ալ՝ որ ամենէն զգուշիկն է, սուղունի պէս լրագրութեան շուրջը կը դառնայ, համակրութիւններ կը շալոյն, պարզապէս վնասներ հասցնելու նպատակաւ:

Այս միևնոյն ընթացքին մէջ կը տեսնուին շատերը հայ վարժարանի մասին:

Դասակարգ մը ունինք, որ շատ անգամ խօսակցութեան ընթացքի մէջ պարզապէս խօսքի խառնուած ըլլալով իրենց խելայիութիւնը ցոյց տալու կամ կեղծ ազգասիրութիւնը քողարկելու համար, հառաչանք կը յիշեն թէ՛ ինչո՞ւ Եգիպտոս չ'ունենար հաւնաշատան մը, գաւառներէն հոս բերուած հայ մանուկներուն զուտ ազգային դաստիարակութիւն մը մատակարարելու համար, քանի որ հոս գաւառներուն նման գրաքննութեան և բռնութեանց ենթակայ չէ: Ու ասդին երբ Գահիրէի հայ վարժարանին ամենախեղճ վիճակի մը մասնուած ըլլալը կը պարզուի իրենց աչքին առջև, փոքրիկ ջանք մը անգամ ընել չեն ուզել, վարժարանը այդ խեղճութիւններէն ազատելու համար. վարժարան մը՝ որ իր խոշոր կայրուածներով և ապահովեալ եկարմուսներով նիւթական շահողութիւն ալ չ'ապահանջեր:

Ինչո՞ւ չեն մտենար վարժարանին, որովհետեւ աղային, հոգաբարձուին, խարժը

կը մնայ և օր մը հանդիպած ատենը բարեւ չ'տար, ու իրեն անկէ սպասած մէկ շահը կը վտանգուի . . .

Այսպէս ինքզոյ մը լուծումը երբ գործնականին կը հասնի, մէք խելայիներուն ամբողջ գեղեցիկ ծրագրիներն յօդս կը ցնդին և կ'զգանք թէ ատոնք լի ուրիշները շալոցնելու և իրենց վրայ լաւ գաղափարներ կազմել տալու համար եղած սրտապախտութիւններ և դատարկարանութիւններ են:

Այս ամեն նմոյշներուն « Արշալոյս » իր առաջին վեցամսէին մէջ հանդիպելով, այսօր իր երկրորդ կիսաշրջանը կ'սկսի հաստատամտութեամբ, իրեն լուրջ կերպով համակրողներուն և քաջալերողներուն օժանդակութեան վստահելով և արդէն միևնոյն հաստատամտութիւնը պիտի պահէ ուրիշ շրջաններու համար ալ:

« Արշալոյս »ը հրատարակուած օրէն ցայսօր շատերը փափաք յայտնած են, որ շաբաթական երեք անգամի վերածուի կամ ծաւալը քիչ մը ևս ընդարձակուի, բայց չեն ուղած մտածել թէ՛ այս երկու փոփոխութիւններէն մին ընելու ատեն, մեր ամսական ծախուց վրայ, որ արդէն բաւական կըրիկ գումար մ'է, ինչ կրնայ աւելնալ և թէ այդ փոփոխութիւնը մացնելու համար դեռ ինչ չ'նախատեսուած դժուարութիւններ երևան պիտի ելլեն:

Ասիկայ մեր ալ փափաքներէն մին համարելով, պիտի ջանանք ազագայի մէջ իրագործել մեր համակրողներուն փափաքը:

Առ այժմ մեր թերթը պիտի շարունակուի ըստ առաջնուսն, մինչև իւր առաջին շրջանի աւարտումը:

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

Ինչ է լրագրութիւնը գործնական աշխարհի մէջ՝ ու անոր դերը ժողովրդային մտքի ու բարուց վրայ:

Լրագրութիւնը ժողովրդի մը հայելին է, ազգի մը հոգին է՝ առանց լրագրութեան դիւրագոյն չէ ըմբռնել ժողովրդի մը կամ ազգի մը իմացական ու հոգեկան բոլոր կարողութիւնները, ցորչափ որ այդ ազգ կամ ժողովուրդ իւր գոյութիւնը պահել գիտցած ըլլայ երկրագնդի ծանօթ կամ անծանօթ մակերեւոյթին վրայ:

Այս ճշմարտութիւնը այսպէս չ'ընդունելու օչ մի պատճառ ունինք: Ամեն ազգ՝ իր գոյութիւնն ու տեւականութիւնը, բարքերն ոչ սովորոյթները,

ծանօթացնելու համար, թողած է յաջորդող սե-
րնդեան իւր պատմութիւնը, որուն իբր հետեւող
մեր ազգն ալ ընծայած է մեզի իւր պատմութիւնը
իւր բազմակողմանի ծանօթութիւններով :

Ուրեմն՝ երբ պատմութիւնը ազգի մը սեւեա-
կանութեանը պատահարներուն եւ իրարու յաջոր-
դող դէպքերուն կենդանի վկայն է, բացարձակ
կերպով ճշմարտութիւն մ'է ըսելը թէ՛ լրագրու-
թիւնն ալ միեւնոյն ժողովրդեան հոգեկան եւ
մտաւորական կարողութեանց կրթիչն է, հրահան-
գիչն է, մէկ խօսքով զօրեղ դաստիարակն է :

Սակայն մենք առանց այդ ճշմարտութեան
մանրամասնութիւնները փնտռելու, երբ փորձենք
փոքրիկ ակնարկ մը ձգել ժողովրդի եւ լրագրու-
թեան մէջ, կամ աւելի ճիշդը ուսուցչին եւ ու-
սուցեալին մէջ, նոյն հետայն պիտի ըմբռնենք
դրութեանց եւ եղանակի ապարդիւն հետեւու-
թիւնները, որք ցարդ գուցէ կատարելագոյն գո-
հացուցած չ'ըլլան մեր ժողովրդին երբեմն խստա-
պահանջ եւ երբեմն խսկաւ անգիտակ դասակարգը :

Ձայն հաստատող մեր մտադրած վերլուծումին
աւելի շուտ հասնելու համար, ամեն բանէ առաջ
սա հարցը կը ներկայանայ մեզ թէ՛ մենք հայերս
ի՞նչպէս կը վերաբերուինք դէպ ի լրագրութիւնը
եւ ինքը, լրագրութիւնը, որպիսի՞ եղանակաւ կը
խօսի մեր սրտին, մեր մտքին հետ :

Մենք հայերս՝ մեծաւ մասամբ մալեօական
եւ հասրային այս ծիծաղկոտ երկրին իբր անկող
հիւրերը, չենք կրնար մոռնալ թէ՛ բնապետութեան
արեւնկզակ տիրապետութեանը ձեռքէն փախս-
տականներ ենք. Եզրիպտոսի մեծահաւքաւ հարս-
տութեանը իբր բարեխիղճ զմայլողներ, մենք՝ մեր
երկրի մէջ ամենքս մեր տեղն ու դիրքը ունենինք,
եւ մարդկային իրաւանց բռնաբարութիւնն այս-
քան խստութիւնները չ'զործուած, ամենադոյզն
զրկումի մը հանդէպ մեր սրտերէն միշտ մամուլ,
միշտ լրագրութիւն կ'աղաղակէինք, ու այսօր հոս
Գահիրէի այսքան գոհունակ ու եզակի ուստային
մէջ, իբր ժողովուրդ՝ մեր ձեռքովը սնուցած մեծ-
ցուցած անտարբերութիւնը միայն այսքանով կ'ար-
դարացնենք թէ՛ լրագրութիւնը իւր դերը չ'կա-
տարեր :

Ասի ստո՞յգ է արդեօք :

Լրագրական գոյութեան շնորհացը իբր մաս-
նակի յիշատակութիւն կրնանք մտաբերել թէ՛
Գահիրէ հակառակ իր լրագրի համար ստացած ա-
նէճքի մշտնջենական դատապարտումին կրցաւ
ունենալ մի քանի թերթերու եւ հանդէսի փայլուն
երեւոյթը իբրեւ աշխարհային փայլակ, որոց ա-
մենքն ալ առանձին առանձին իրենց նշմարելի
ցոլացումը ունեցան, սակայն մտքի եւ իմացական
զարգացման եւ կամ գաղափարային այնքան ան-
նեղաշնակութեանը վրայ իրենց լուսեղէն ու ար-
շաւասոյր ընթացքովը ո՞րպիսի օգտակարութիւն-
ներ մատուցին :

Ահա ասոր դրական կամ հաստատական պա-
տահան մը տալ այնքան դիւրին չէ, որքան ա-
ւելի տիրապետ կերպով մը ըսելը թէ՛ գործողի
եւ գործեալի սկզբնական վիճակին մէջ ոչ մի
բարեփոխում եւ արդիւնք չ'բերին եւ այդ ոչ
ուրիշ պատճառներով՝ եթէ ոչ այս երեւոյթով, որ
լրագրութիւն եւ ժողովուրդը զբերար չ'հասկացան :

Արդարեւ մեր ժողովրդեան բազմադիմի պի-
տոյցը, ցաւոցը եւ վէրքերուն նախախնամական
փրկութիւնն մը պէտք էր, որուն լրագրութիւնը
չ'բաւեց : Բայց թէ ի՞նչ պատճառներով լրագրու-
թիւնը իւր ջերմասնակց կոչումին արժանաւոր
պտուղը չ'վայելեց, կամ ասոր հակառակ ինչո՞ւ
ժողովուրդն ալ կը պահէ միշտ իր սանտութիւնը,
անհոգ երեւոյթը, դէպ ի իր լրագրութիւնը. ահա
հոս է իրական գաղտնիքը, որուն ծածկոցը հարկ
է որ անգամ մը մէկ կողմ նետենք :

Դիտել պէտք է թէ՛ այլ երկիրներու մէջ
լրագրութիւնը, որ անմեկնելի համբաւ ու բարձ-
րութիւն կը վայելէ մեր մէջ գեռ շատ տարբեր
ըմբռնումներով կը մեկնեն :

Ոմանք՝ լրագրութեան մը ունէ ձախող գրու-
թեանը մէջ կը փնտռեն իրենց սրտին զայրոյթի
ու տազնապի մեկուսացումը. կան ոմանք ալ, որ
լրագրութիւնը պարզ կերպով կ'ընդունին իբր
իրենց յայտնի էյլեմենտ, որպիսին է սրճարանի
իրենց պէզվիւր, պրիչք. քառօյլ կամ իսպաթիի

իրաւունքները ըստ իրաւաբանութեան այնքան
վէճերով նուիրակահանարուն համար :

Այդ քառօյլ կամ իսպաթիի թղթին որեւէ հա-
տորիկը ժամանակ չ'ձգեր դէժ մի քանի վայր-
կեան ալ լուրջ կերպով մտածել, լրագրութեան
յայտնած այն ինչ կենսական խնդրոյն կամ հար-
ցին վրայ, որ ուղղակի կապ եւ առնչութիւն ու-
նեցած է թերեւս ժողովրդային ըմբռնումի եւ
համոզման անսահման ծաւալին մէջ, որուն կարե-
ւորութիւն տուող ամեն ազգ իրաւամբ կրցած է
վայելել ապրած կեանքին դիւրահաճ եւ նախան-
ձելի ամեն կատարելութիւնները :

Շատ ստոյգ է որ ժողովրդի մը վայելքը իր
հոգեկան եւ բարոյական զարգացումի սահմանին
մէջ է. այդ սահմանը որքան լայն, որքան ընդար-
ձակ լինի, այնքան եւ համեմատական կը դառնայ
այդ ազգի եւ ժողովրդեան ներկայ ու ապագայ
բարօրութիւնը :

Այդ զարգացումը մենք պէտք է սպասենք պէտք
է քաղենք լրագրութիւնէն, որուն եւ այսօրեայ ոչ
այնքան ողբեր դրութիւնը պէտք չէ թուլացնէ
մեզ թէ՛ մեզնի ալ այդ երեւոյթով պիտի ընդու-
նենք. ոչ. գուցէ վաղը ժողովուրդի եւ լրագ-
րութիւն միանգամայն արբերինք, որուն համար
այսօրունէ իսկ կրնանք մտածել թէ ինչո՞ւ չը
պիտի տարբերինք :

Եւ մեզ համար այսքան ուշ մտածելնիս դէպ
ի լրագրութիւնը եւ լրագրութեան ալ դէպի ժողո-
վուրդը, արդարեւ հիմնական պատճառներ են մեր
այսքան անկարգ ու անհոգ դրութեան, եթէ ոչ երբ
ժողովուրդը չ'սպասէ մտածելով թէ լրագրութեան
պարտքն է իսկ լրագրութիւնն ալ ցոյց տալէ, մատ-
նանիչ ընկէ յետոյ չ'լուս ըսելով թէ մնացեալ ժողո-
վրդին գիտնալիքն է. յայնժամ ոչ մի կասկած չ'պի-
տի ունենալինք իրապէս բարեօրումը տեսնելու
մեր հանրային ու ժողովրդական բոլոր խնդիրնե-
րուն, որք հոտհոտէ ամուր տեղ մը գրաւած են
Գահիրէի մենծ-աղայական օթեակներուն վրայ... :

Իմ պատասխանս զիս աւելի հեռու պիտի
տանի երբ Գահիրէի այսօրեայ լրագրական հար-
ցերը նորոգեմ. այս ճշմարտ է միայն որ ժողո-
վուրդը սրտով հետեւող ըլլայ իր լրագրութեանը
եւ յարգէ նորա իսկական ամենաբարձր նշանա-
կութիւնը :

Սուկէ անգին մտադրելով պէտք է ձգել լրագ-
րութեան. լրագրութիւնը ինչով չ'տոածէ, վի-
րաւորը վէրքը ու անոր դարմանումի նորագոյն
եղանակը :

Մ. Ֆ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խարթումէ եկած լրոց նայելով՝ Սիր-
տարին պալատը ամբողջովին աւարտեր է
այժմ : Ծախսուած դրամը 20,000 ոսկիի կը
հասնի : Շատ մը տէրվիչ գերիներ շինու-
թեան գործածուած են : Պէտք եղած փայտը
Սուտանի անտառներէն հայթայթուեր է :
Պալատը երեք յարկերէ կը բաղկանայ եւ
ունի գեղեցիկ տեսարան մը սպիտակ եւ
կապոյտ նեղասերուն վերայ :

— « Մոքաթթամ » կ'ըսէ թէ՛ Բրէնս
Ահմէտ պէյ Սէյֆէտտին քիչ ատենէն Լոն-
տոն պիտի խրվուի Բարեսիւրական հաստա-
տութեան մը մէջ խնամուելու համար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎԱԼԻ ՊԱՏԵՐԱՉՄԸ
Պրիւսէլ հրատարակող Բրքի Պրէտօ
լրագիրը կը հրատարակէ Բրէթօրիայէ թղթ-
թակցութիւն մը, որու մէջ կ'ըսէ թէ Անգ-
լիայի ք. հակառակ իրենց ուրաջումին՝ տրմ-
տըմ գնդակներ կը գործածեն :

— Թայլանդի Լորինսօ-Մարգէզի թղթ-
թակցիցը 23 յունվար թուակրաւ հեռագրին
մէջ կ'ըսէ թէ՛ կը կարծուի որ յառաջիկայ
չարժու թրանսվալ գտնուող մնացեալ
Անգլիայի հպատակները խմբովին արտաք-
սուին :

— Լորա Բօզպէրի կարեւոր բանախօ-
սութիւն մը ըրաւ ի Չաթհամ հարաւային
Ափրիկէի պատերազմին վերայ :

— Պ. Հերպերդ Կլաստգոն իւր Հօլ-
պօքի ընտրողներուն ներկայութեանը վեր-
ջիւրս ճառ մը արտասանեց, որուն մէջ կ'ըսէ
թէ կառավարութեան առաջ խոչընդոսներ
հանել պէտք է զգուշանալ, որպէս զի
Անգլիական բանակին ցոյց տուած դիւ-
ցազնական զոհողութիւնները ապարդիւն չի
լինին : Ատենաբանը դատապարտել վերջ
Պ. Բօտի եւ Պ. Չէմպրլէնի շարժումները,
կ'եզրակացունէ ըսելով՝ պէտք է որ կառա-
վարութեան ընթացքը մանրակրկիտ քննու-
թեան մը ենթարկուի, բայց « վայրկեանը
հասած չէ » :

ԹՈՒՐԻՒՄ

Կ. Պօլէն հետեւեալը կը հեռագրեն
24 յունվար թուակրաւ :

— Սուլթանը հրամայեց որ իւր անձ-
նական թիկնապահներուն վերայ երկու
գումարտակ ձիաւորներ աւելնան : Այս երկու
նոր գումարտակները պիտի կազմուին հինգ
տարբեր տարրերէ, որոնց մէջ պիտի գրա-
նուին մեծ թուով Չէրքեզներ եւ մի քանի
Ալպանիացիներ, որք մասնաւորապէս պաշ-
տօն պիտի ունենան իրենց Ասիացի ընկերաց
վերայ հսկելու : Այս մասնաւոր հեծելազօ-
րաց հրամանատարութիւնը պիտի յանձնուի
Իսահաֆ պէյի, որ երիտասարդ սպայ մ'է
Կայսերական թիկնապահաց մէջ եւ կըբայրը,
հարեմի կիներէն միոյն՝ որուն մասնաւոր
սէր մը ունի Սուլթանը : Սուլթանին անձնա-
կան թիկնապահաց արդի թիւը կը բարձ-
րանայ 10,000ի, որ կազմուած է՝ 1600 հոգի
մասնաւորապէս ընտրուած խումբէ, 7300
հոգի կանոնաւոր խումբէ եւ երկու հրետա-
ձիգ խումբերէ : Այս փոքրիկ բանակը կը
կազմէ Երւրդ Գէօլի զինուորանոցը :

— « Ահմէտ ձէլալէտտին փաշայ — որ,
Խըրքայի Եհրիֆի հանդիսին աւթիւ, Սուլ-
թանէն Մարաշխախի աստիճանին բարձրա-
ցած էր — ետ առնուեցաւ իւր աստիճանը,
որովհետեւ իւր անուանումը հաճելի երեցած
չ'էր բանակին՝ որուն մէջ միայն պատուա-
կալ աստիճան ունէր » :

Կ. Պօլէն կը հեռագրեն 26 յունվար
թուակրաւ :

— « Այսօր գեսպանք պիտի հաւաք-
ուին խորհրդակցելու համար մաքսատանց
վիճելի խնդրոյն վերայ՝ զոր Բ. Դուռը տա-
կաւին կարգադրած չ'է, հակառակ մի քանի
ամիսներ առաջ տրուած նոյնօրինակ ծանօ-
թագրի մը՝ որ անպատասխանի մնացած է :
Բոլոր գեսպանատանց մերձավայրքը
հսկողութեան ներքեւ առնուած են արգի-
ւելու համար երիտասարդ-թրքաց որպէս
զի գեսպանաց յայտարարութիւն (manifeste)
չի սան՝ ի նպաստ բարենորոգմանց գործա-
գրութեան անոնց միջամտութիւնը խնդրող :

ԱՆԳՂԻԱ

«Մանչեսթրը կարտիէն»-ի գրածին նա-
յելով, Վիքթորիա թագուհին հաւանակա-
նաբար ծովու ճամբով Իտալիա պիտի եր-
թայ, փոխանակ ծրանսայէ անցնելու: Ըն-
տանեկան շրջանակէն, ինչպէս նաև պալա-
տական մի քանի անձինք են որք — դիւ-
րաւ գուշակելի պատճառներով — իրեն
խորհուրդ տուած են այս ճամբան:

ՅՐԱՆՍԱ

Լիօնի մէջ բժիշկ մը, Տօքթ. Տըվէ,
Սէն-Ժան-Տը-Տիէօյի ֆրէրներուն հիւանդա-
րանին մի քանի բանսիօնէճները կը պատ-
ուաստէր, երբ անոնցմէ մին, յիմար մը,
բժիշկին վրայ կը յարձակի և սուր եռան-
կին խարտոց մը փորը կը մխէ:

Բժիշկը խկոյն հիւանդանոց կը փո-
խադրուի. վիճակը ծանր է:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Սօֆիայէ «Կազէթ տը Յրանքֆորտի կը
գրեն թէ՛ Ֆէրաինանտ իշխանը և իւր կա-
ռավարութիւնը լրջօրէն կը մտածեն Պուլ-
կարիոյ անկախութիւնը հռչակելու՝ որ թա-
գաւորութիւն պիտի լինի: Կը կարծուի թէ՛
Ռուսիոյ հանրային կարծիքը գոհունակու-
թեամբ պիտի նայի Պուլկարիոյ ազատումը
թուրքիոյ հանդէպ իւր հպատակութեան
կապերէն:

Ռուսիա ուէ արգելք չի պիտի յարու-
ցանէ եղեր այս ծրագրին դործադրութեանը
և թէ Պէռլինի դաշնադրութիւնը ստորա-
գրող միւս կառավարութիւնք պիտի ընդու-
նին եղեր կատարուած իրողութիւնը:

Ի Պուքրէշ, ինչպէս ի Պէլլարատ, կ'ե-
րևի թէ, կ'սպասեն Պուլկարիոյ անկախու-
թեան մօտաւոր յայտարարութիւնը:

Նոյնպէս կարելի է նշանակել — Ֆէրտի-
նանտ իշխանի ծրագրին հետ գուցէ կապ
ունեցող — սա դէպքը թէ՛ այս օրերս զա-
նազան կողմերէ զօրքեր զրկուած են Սա-
մաքովի վրայ, ուր, կ'ըսուի թէ, պիտի
մասնակցին ձմրան ռազմափորձերուն:

ՀՈՒԱՆՏԱ

Բարիկի Բոչիլտեան տունը 10,000 Ֆը-
րանքի նուէր մը խրկեց Ամսթէրոամի ա-
դամանդի դործաւորներուն, որք թրանս-
վալի պատերազմին հետեանօք երկար գոր-
ծադուլի մը զոհ և զած են:

Բոչիլտի Լոնտոնի տունն ալ նոյն նպա-
տակաւ համահաւասար նուէր մը զրկեց:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Լոնտոն, 30 յունիս

Գահաճաւը Բառլըմենէն կը խնդրէ
պատերազմին շարունակութիւնը մինչև յաղ-
թութիւն:

Կը յայտնէ նաև կայսրութեան պաշտ-
պանութեան համար կարևոր պատրաստու-
թեանց պէտքը, շատ մը կառավարութեանց
պատրաստութեանցը գիմագրաւելու համար:

ՀԱՎԱՍ

ԵՐԳԵՐ-ՎԵՐՔԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԿԵԱՆՔԻ

Գ.

Սիմօն Ֆելիկեանին

Դու ազատ լեզուով նիւթեցիր երգեր,
Հացէդ զրկեցին քեզ, խեղճ բանաստեղծ:
Մեզրէ խօսքերովդ բուժեցիր վերքեր,
Ամբիւր քեզ ծաղր ըրաւ, բանաստեղծ:

Մինչև գերեզման երգով ջերմունդ
Մ'նացիր ուխտիդ սրբազան զինուոր:
Երգեցիր ազգիդ ցաւ, ցեցն հընուանդ,
Բայց ո՛վ լըսեց ձայնդ, անգի՛ն բանաստեղծ:

Դու լեզուով Աստուած խօսեցաւ մարդուն,
Մարդուն, Աստուծան մէջ եղար միջնորդ,
Աչքդ բաց լացիր գիշերներ անքուն,
Բայց ո՛վ քու արտաւայտ սրբեց, բանաստեղծ:

Անապատ դաշտեր խօսքով շէնցուցիր,
Աւերակին կեանք տուիր, որ ապրի:
Բայց ցամաք հացին կարօտ քաշեցիր,
Ու քեզ աւերակ ըրիր, բանաստեղծ:

Անցան տարիներ, դապաթիդ սիպտակ
Վարսեր նետուտեց բընութեան ձեռքը,
Ու դարձար ծերուկ. թողուցիր կըտակ
Երգերու փունջ մը միայն, բանաստեղծ:

Օր մ'ալ կը բացուի քնարիդ առջ
Փոս մը բընութիւնն իր աւանդ կ'առնէ,
Ձը իշուար անունդ, երգերդ ու հասաչ,
Ապերախտ է մարդն, ո՛վ հէզ բանաստեղծ:
Աղքատանդրիա ԱՎՕ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՐԲԱԽՆԱՄԸ

Վասպուրականի Որբախնամ ընկերու-
թեան Պատ. Գործ. Ժողովը, ի գիտութիւն
նոյն ընկերութեան անդամաց մեզի հրատա-
րակութեան կը զրկէ երկու նամակներու
պատճէններն, որոցմէ մին Վասպուրականի
այցելու հովիւ Կեր. Տ. Ներսէս Եպս. Արս-
լանեանի և միւսն Վարազայ որբանոցի հո-
գաբարձութեան կողմէ զրկուած է: Մենք՝
հաճութեամբ կը հրատարակենք զայնս,
հրաւէր ուղղելով մեր ազգայիններու՝ որ
փութան քաջալերել Վասպուրականի Որբա-
խնամ ընկերութեան շատ օգտակար ձեռ-
նարկն:

Պատուարան ու մարդասէր անդամոց և
նուիրատուաց ու ժրջան վարչութեան «Վաս-
պուրականի Որբախնամ» ընկերութեան՝ որ յՆ-
գիստոս. նուիրեմ սիր, ողջոյն և Աստուածային
օրհնութիւն:

Ընդ տիրանուէր ողջունիս յայտ առնեմք սի-
րելութեանցդ՝ զի կարի գոհ լեալ է մեր, ընդու-
նելով զգրութիւն վարչութեանդ ի Նոյնմերի
տարւոյս և որով յայտնի ն ատակ կազմութեան
Որբախնամ ընկերութեանդ և փափագի՝ պահելոյ
յՈրբանոցին ՎարազայՍ. միաստանին գերկուզին
որբս, անբողբայեալք ի դիպուածս վերջինս հայ-
րենեաց:

Ապաքէն կարի գոհլիլ և վսեմ է նպատակ
Ձեր, որ բերէ ի հանդէս զմարդասիրական զգաց-
մունս և զազնիւ ձգտու՛ն պատուական անդամոցդ
Որբախնամ միութեան, զի յօտարութեան իսկ չը
մոռացեալ Ձեր զանրաղբութիւնս հայրենեաց,
որոց ի դարման բերէք զվաստակոյ՝ աշակից գո-
լով մեզ և որոց կրեն զբեռինս ծանունս և զյոգ-
նութիւնս տաժանակիրս բազմութիւ որբոց և
այրեաց:

Որպէս յայտնեալ եմք վարչութեանդ Որբա-
խնամ ընկերութեան, յանուն Ձեր որդեգրեալ եղեն
երկոքին աշակերտք որբացեալ ի ծնողաց և մատ-
նեալք կարի իմն շուառութեան, բայց դեռ ո՞րքանի
են նոյնպիսի շուառացեալք որ հանապազօր դե-
գերին ատանդակակն ի փողոցս և ի հրապարակս.
զանալէ՛ ի կորուստ և ի մոլութիւնս և ի զուր
բաղին զընուն զթոյ և մարդասիրութեան:
Ձբանիս այնպիսեաց և ս. յան. առնեմք կարեկ-
ցութեան Ձեր և ինդրեմք զուն զործել և տա-
րածել զինամս Ձեր և ի պաշտպանութիւնս ի
վերայ բազմաց, որպէս վայել է համբաւոյ մեծա-
տարած գաղթականութեան Եգիպտոսի: Հասեալ
մեր ի վիճակս Վասպուրականի, մեծագոյն մտա-
հոգութիւն առթէ մեզ վիճակ որբոց, որոց չկա-
րեմք տանիլ դարման, այլ միայն օգնութեամբ
բարեսիրաց և բարեգործ ազգայնոց և ակն ու-
նիմք զի գաղթականութիւն Եգիպտոսայոց բերէ
մեզ կարեւոր օժանդակութիւն:

Ուրեմն յորդորելով զՁեզ առաւել և սխա-
խուսել ի գործ և ի պարտակատարութիւն, զոր
թեւադրէ Ձեզ բնական գոռթ գորովոյ և մարգա-
սիրական կարեկցութիւն, ակն ունելով երախ-
տադիտութեան որբոց և վարձուց բարեաց յառ-
տիս և ի հանդերձելուս ի առողջն բարեաց և
յԱմենակալէ, որ գիտէ վարձատրել զառաքինս
և որք պաշտպան լեալ են բարւոյ և առաքի-
նութեան:

Այս առթիւ օրհնեմք զհամայն անդամս Որ-
բախնամ միութեանդ, զնուիրատուս և զվարչու-
թիւնդ և մաղթեմք Ձեզ յԱմենակալէ զխաղաղու-
թիւն և զերջանկութիւն յաստիս և ի հանդեր-
ձելումն անանց փառք յաւիտենից:

Ողջունելով զՁեզ սիրով Աստուածային և
օրհնութեամբ
Մ'նամ Աղօթարար
Այցելու հովիւ Վասպուրականի
ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԱՐՍՒԱՆԵԱՆ
Կնիք

ԼԱ ՄԻՉՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆՍՏ. Ա. ՊԱ. ՀՈՎ. Ա. ԳՐԱ. ԿԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱՐՀԻ ԱՄԵՆԸՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա-
բաժինները:
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ
իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրիթէ՛
աչխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԵՌՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գանուող ուրիշ որ և է ընկերութենէ
աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն-
ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յԱզգ. քաւարիա.

Վան, 18 դեկտ. 1899

Պատ. Վարչութիւն «Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան»

Ի Գահիրէ

Վարագայ վանուց հոգաբարձութիւնս ուրախութեամբ ստացաւ ձեր նոյ. 1 թուակիր դրութիւնը...

Աշխատեցանք ձեր պաշտպանեալները ընտրել անոնցմէ. որք բոլորովին անոք ու անխնամ լինելով...

- 1. Խաչատուր Սարգիսեան, Գաւաշի Բելու գիւղացի 13 ամեայ:
2. Վարդան Սարգիսեան, Գաւաշի Բելու գիւղացի 10 ամեայ:

Երկուքն ալ մի եղբայր են, հայրերնին մեռած է Յ տարի առաջ պատահած դէպքերէն յետոյ...

Որբանոցին մէջ կը գտնուին 95 աշակերտներ, որոց մեծագոյն մասը Ազգ. Պատրիարքարանի ու թարեալէր ազգայնոց կողմէն որդեգրեալ են...

Ձեր զրկած առ հաշիւ 5 1/2 օսմ. ոսկին ստանալով, անցուցած ենք ի հաշիւ:

Օրհնելով ձեր ջանք ու աշխատութիւնը, կը մաղթեմք պատ. ընկերութեանդ յարատեւութիւն եւ կ'ողջունեմք զՁեզ Աստուածային սիրով եւ ողջունելու:


Այցելու հովիւ Վասպուրականի եւ նախագահ հոգաբարձութեան Վարագայ վանուց

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԱՐՄԱՆԵԱՆ

Վ. Ա. Ա. Ռ. Ա. ՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՅԵ

ՇՍ.ՐԷ. Ա. ՊՅՏԻԿ. Ա. ՁԻԶ



Թէյի գործածութեան ընդհանրանալովս, թէյի ճաշակն եւ նրբայած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է...

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ եւ ընդարձակ գործառնութեամբ...

Թէ Կ. Պոլսոյ եւ գաւառաց, եւ թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել եւս յարիւր մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերս օտակիլ կոյուրի եւ զնոց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեղի եղած ԿՍՆԻԿ Գրամով յանձնարարութիւնը փութով կը կատարուին:

13 — 30

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՍԹ 2 ՅՈՒՆՎԱՐ 1900

Table with 2 columns: Category (Ա. Թիւ, Բ. Գ., Դ., Ե.) and Value (3466, 4296, 1715, 2876, 8720) and another column with values (4000, 200, 400, 30, 30).

Հետեւեալը 23 ական ֆրանք կը շահին

Table with 5 columns of numbers: 6040, 4699, 320, 6932, 3706, 9772; 5473, 4366, 1412, 8473, 3110, 3433; 6699, 7897, 220, 1045, 4747, 3644; 2279, 6646, 4626, 735.

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԳԻՆԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամենափափուկ ստամբ, ունեցողներուն համար:

Մի' ուտէք երբէք այն հայերէն, որոնք չունին բն փորձառու եւ վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն եւ հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կրնան զմեզ:

Այս հիւանդութիւններէն եւ հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն աղաւթ մնալու մեակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՅԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Օոօզի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմաթի 6րօս դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՅԿ. բաղմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ եւ անխարդախ աղւորէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՅԿ. թեան փուռին մէջ դաղդիական, անգղիական, գերմանական եւ յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՅԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն որւորձի թէյի եւ կաթի պարսիմաթներ կային:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՅԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշ դուրսեմբ եւ փութով կը կատարուին: 26—30

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔ. ՊԵՏՐՈՍ ՆԻԿՈՂԵՍՈՍ

Տոկուն եւ մարգարտաշար ակումներ ու առողջ լինողներ ունենալն ոչ միայն մարդուս գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կարենալ ապրելու առաջին պայմանն է: Տիար Պետրոս Նիկողոսմոս, վկայեալ ատամնաբոյժ, որ երկար տեսն Բարիլու մէջ ատամնաբուժութեամբ զբաղած եւ արհեստին նորանոր կատարելութեանց խիստ մօտէն հետեւած է, այժմ քաղաքս վերադարձած եւ էզպէքիյէ Տրանսէզ վաճառատան ճիշտ դիմացի արարողմանին մէջ ատամնաբուժական աշխատանոց մը հաստատած է, ուր ամեն օր պատրաստ է իրեն դիմողներն գոհացնել թէ արհեստին յաջողակութեան եւ թէ գներու յոյժ չափաւորութեան տեսակէտով:

Հինգշաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը 3էն 5 ձրի դարմանում: